

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԵՐԳԵՐՈՒՄ**

ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը գուսանական և ժողովրդական բանարվեստի ինքնօրինակ ու հետաքրքիր մի համաձուլվածք է: Եթե գուսանական արվեստն իր կնիքը դրել է գլխավորապես նրա խաղերի տաղաչափական ձևերի ու հանգավորման եղանակների վրա, ապա ժողովրդական բանահյուսությունը ներթափանցել է երգչի բանաստեղծական աշխարհի բոլոր ուղորտները և առաջին հերթին ու ամենից շատ՝ նրա ստեղծագործության լեզվի և գեղարվեստական պատկերների համակարգը:

Բնության ու հասարակական կյանքի երևույթների ու առարկաների նրկատմամբ ունենալով նույն վերաբերմունքը, ինչ և իր հարազատ ժողովուրդը, աշխարհն ու մարդկանց դիտելով նրա հայացքով, Սայաթ-Նովան ստեղծագործողի իր խորը ներքնազգացողությամբ կարողացել է ընկալել ժողովրդական բանարվեստի բանաստեղծական ներքին հարստությունները և վարպետորեն օգտագործելով այդ բանարվեստն իր խաղերի մեջ, նոր երանգ է հաղորդել դրանց, սեփական տաղանդի փայլով զարդարել ժողովրդականը:

1

Ժողովրդական բանարվեստի հետ կապված է, նախ և առաջ, Սայաթ-Նովայի բանաստեղծական լեզուն: Հիանալի տիրապետելով թե՛ հարազատ ժողովրդի և թե՛ հարևան ազգերի կենդանի խոսակցական լեզուներին, մասնավորապես մայրենի թիֆլիսահայ բարբառին, բանաստեղծը կարողացել է իր խաղերում հանդես բերել ժողովրդական բառ ու բանի, դարձվածքների ու ոճերի իմաստային ու հուզական անսպառ կարելիությունները, որոնք ներմուծել են նրա ստեղծագործության մեջ ժողովրդի կենսափիլիսոփայության, միջավայրի ու կենցաղի կենդանի ու թարմ հոսանքը:

Ժողովրդական բառ ու բանի հետ Սայաթ-Նովայի բանաստեղծական լեզվի ունեցած սերտ աղերսի առավել բնորոշ դրսևորումներն են հանդիսանում այն բազմաթիվ ու բազմազան առանձնահատուկ արտահայտությունները, ժողովրդական ոճերն ու դարձվածքները, որոնց մեջ հաճախակի հանդիպում ենք նրա խաղերում: Կենդանի խոսակցական լեզվից ու ավանդական բանահյուսությանից սերող ոճական այդ հարստությունները Սայաթ-Նովայի բանաստեղծական խոսքին հաղորդել են հատուկ հյուսվածություն, թանձրություն ու որոշակիություն: Բացահայտելով հեղինակի լավատեղյակությունը բուն ժողովրդական կյանք ու կենցաղին, սովորույթներին, բարքերին, հասկացություններին ու հավատալիքներին, դրանք միաժամանակ հասարակական լայն զանգվածներին ըստ ամենայնի հարազատ ու հասկանալի են դարձրել նրա խաղերի բովանդակությունը:

Սայաթ-Նովան գրել է. «Սիրտըս էշխեմեն էրած է» (52), «սըրտիս մեշըն արունն մերած» (75), «սիրտըս փորումըս սըքուր է» (75), «էշխեմես հիվան-

դացիլ իմ» (18), «էշխեմետ յիս դառիլ իմ դիվանա» (142), «էշխի գերի իմ դառի» (210), «արտասունքըս արուն շինեցիր» (37), «աշկիրըս արնով թացիլ իմ» (41), «աշկըս ճամփիտ ջուր է կըտրի» (99), «գըլուխըս քիզ մատաղ կոնիմ» (86), «առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխրիս մալըն» (33), «գարդըստ հանին արզ արա» (25), «թամամ աշխար պըտուտ էկա» (51) և այլն¹:

Նույնը գտնում ենք և մեր ժողովրդական երգերի մեջ. «վառվեցա էշխիդ կրակով» (548), «սիրտըս ա լիքը արին» (449), «սիրտըս փորիս մոլոր է» (237), «քու սիրուն հիվանդ եղա» (548), «էշխիցդ ջունուն դառած» (477), «դու ինձի արիր դիվանա» (172), «սիրուս համար դութսաղ ընկնի» (286), «արտասունքս դարձավ պուտ-պուտ արուն» (317), «աշքը ճամփին մնաց» (24), «գըլուխս գըլխիտ դուրբան» (248), «առանց քեզ ի՞նչ կանեմ աշխարհի մալը» (242), «թամամ աշխարհը ման կը գամ» և այլն²:

Հար և նման ձևով Սայաթ-Նովայի երգերում օգտագործված են ժողովրդական բանավեպերից և մասնավորապես ժողովրդական երգերից սերող կայուն մակդիրներ, գեղարվեստական կրկնաբանություններ և կենդանի խոսակցական լեզվի բանաստեղծական արտահայտչական այլ միջոցներ:

Ժողովրդական բանավեպերի հետ սերտորեն կապված են նաև Սայաթ-Նովայի կիրառած պատկերավորման միջոցները: Դրանք աչքի են ընկնում իրենց շեշտված առարկայականությամբ, աուցուն բովանդակությամբ, բառային ատաղձի թանձրությամբ, ինքնատիպ, շլացուցիչ դրսևորումներով: Վերջիններս հրաշալի բացահայտում են բանաստեղծի երգերի բովանդակության բոլոր նրբությունները, անմիջական, ուժեղ տպավորություն են առաջացնում ունկնդիր-ընթերցողների մեջ:

Սայաթ-Նովան շատ լավ զգացել ու ըմբռնել է ժողովրդական բանահյուսության տարբեր տիպի ստեղծագործություններում և հատկապես ժողովրդական երգերում լայնորեն կիրառված գեղարվեստական պատկերավորման արտահայտչական արժանիքները և իր խաղերի մեջ հաճախակի օգտվել է դրամացից: Այդպիսիք մեծ մասամբ ծառ ու ծաղկի, երկնային լուսատուների և թռչունների (մասամբ և կենդանիների) նմանություններ են, որոնք դորժածվում են ժողովրդական երգերի մեջ և դալիս են խոր հնությունից:

Սայաթ-Նովան գրել է. «էրեսըտ աուլուտվան արիվ՝ քանի կեհա կու վարդանա» (56), «էրեսըտ նուր լուսնի նըման քանի կեհա, կու բոլըրվի» (7), «Մովի պես ուրդան իմ տալիս, գըժվիլ իմ Արազի նըման» (18) և այլն:

Նույնը հանդիպում ենք գուսանական «հայրենների» մեջ. «Երեսդ է արևի պէս. բարձամբ սրմա թեկ նման» (222), «Տեսա զիմ եարըն նստած, գէտ հադար լուսին բոլորած» (71), «Թուխ աչքդ ու կամար ունքերդ, քան ըգծովն կու դարնէ ալի» (113)³ և այլն:

Սայաթ-Նովայի երգերում վարպետորեն օգտագործված են նաև ժողովրդական բանավեպերում հաճախակի հանդիպող անձնավորում-շնչավորումները, լափաբանությունները, պատկերավոր դուգահեռները, գեղարվեստական խորհրդանշաններն ու այլաբանությունները:

Իր խաղերի տաղաչափական ձևերով և հանգավորման եղանակներով հիմնականում կապված լինելով ընդհանուր արևելյան աշուղական արվեստի

¹ Տե՛ս Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կադմեց Մ. Ս. Հասարթյան, Երևան, 1959:

² Տե՛ս Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940:

³ Նույն տեղում:

ավանդույթների հետ, հայագգի երգիչ-բանաստեղծը, սակայն, այստեղ էլ չի կաշկանդել իրեն միայն տվյալ շրջանակով: Ստեղծագործաբար կիրառելով նշված ավանդույթները, նա միաժամանակ հաջողությամբ կիրառել է նաև ժողովրդական քնարերգությանը բնորոշ տաղաչափական ձևեր ու հանգավորման եղանակներ, դրանով իսկ ավելի բազմազան ու կատարյալ դարձնելով իր երգ-արվեստը: Նշանակալից է այս առումով գուսանի հետևյալ խոստովանությունը.

Շատ մարթ էստունք կու իմանա, կոսե. «հալբաթ սա զանգին ա»,
 Չին գիդի թե ուշկ ու միտկըս հազար մե բաբաթ հանգին ա.
 Մարիփաթով քաղցըր լեզուն գիդունի վրա անգին ա (27):

Սայաթ-Նովայի խաղերում մենք գտնում ենք ժողովրդական երգերի մեջ լայնորեն կիրառված համապատասխան շեշտեր, գուսանական «հայրեններին» և ժողովրդական խաղիկներին բնորոշ՝ պարզ, ռիթմիկ, բազմազան ու կանոնավոր տաքեր, թե՛ հնչյուններով և թե՛ նշանակությամբ իրար հետ կապակցվող բազմաթիվ բառ-հանդեր, որոնք սովորաբար ծագած լինելով կենդանի խոսակցական լեզվի մեջ ինքնաբերաբար զուգորդված համապատասխան բառերից, հետագայում դարձել են բանաստեղծական հանգեր, աչքի ընկնելով իրենց իմաստավորությամբ և բարեհնչունությամբ:

Սայաթ-Նովան, օրինակ, գրել է.

Օսկե փարչումըն լըցուցած անմահական ջուր իս, ախպեր,
 Խըմողն վունց կու կըշտանա՝ դուն կաթնե ախպուր իս, ախպեր (24):
 (ջուր իս, ախպուր իս)

Շամամիրդ քաղի մեշըն,
 Ման իս գալի բաղի մեշըն (58) (թաղի մեշըն, բաղի մեշըն)
 Մեջլիսներու խաղըն դուն իս,
 Վանքերումըն տաղըն դուն իս (43) (խաղն, տաղն)
 Յար, մտիլ իս բաղի մեշըն, աջայիս սեյրան իս անում,
 Նուրկըտ. արեգակի նման է՝ տեսնողին հեյրան իս անում (18):
 (սեյրան իս, հեյրան իս)

Նույնը առկա է նաև հայ ժողովրդական երգերի մեջ.

Հով ծառի տակ պաղ աղբյուր,
 Արծաթե թաս, ոսկե ջուր (554):
 Բուսել ես բաղի միջին,
 Շամամի բաղի միջին (8):
 Աշուղի պես խաղ ասա,
 Բլբուղի պես տաղ ասա (194):
 Արի կայնի, սեյր անեմ,
 Քու ջամալիդ հեյրան հմ (371):

2

Ժողովրդական բանավեպից ծագող վերոհիշյալ գեղարվեստական արտահայտչամիջոցների հետ Սայաթ-Նովան իր խաղերում ազատ ու անկաշկանդ օգտվել է նաև հայ և այլազգի ժողովրդական առած-ասացվածքներից:

Նա նման չէ այն սովորական աշուղներին, որոնք իրենց երգ ու նվագով լոկ զբաղեցրել և ուրախացրել են ունկնդիրներին: Բնությունից շոայլորեն օժտված լինելով մեծ արվեստագետի ու մտածողի արտակարգ ձիրքով, Սա-

յաթ-Նովան հասարակության մեջ հանդես է եկել իբրև իսկական «ուսուցիչ ու մարգարե» (Վ. Բրյուսով)՝ մեքկացեցելով և նշավակելով ժամանակակից իրականության բացասական երևույթները, սիրո ու արդարության կոչ է արել մարդկանց: Մեծ գուսանը հրաշալի գիտակցել է իր այդ առաքելությունը: Նա բազմիցս ակնարկել է այն մասին, որ ինքը կոչված է՝ «իրատ տալու», «ուշքի բերելու» մարդկանց, որ իր անվանի վարպետ դառնալը կանխորոշված է եղել վերուստ:

Սայաթ-Նովա փիր-ուստադին ճանանչիր.

Խըրատ տոլդ—ուշքի բերողներից իմ (209):

Սայաթ-Նովա, խոսի հոբուտ ճառերեն,

էս ճամփեն քիզ տրված է մինձ հայրերեն (199):

Ժողովրդական ուսուցչի և մարգարեի վերոհիշյալ պատասխանատու և սլատվավոր դերը կատարելու գործում Սայաթ-Նովայի երգերին լրացուցիչ ավիշ են ներարկել նրան քաջ ծանոթ ժողովրդական առած-ասացվածքները, «խալխի նոքար» հայ գուսանը հիանալի զգացել, ըմբռնել է ժողովրդական առած-ասացվածքների հասարակական և գեղարվեստական ներգործոն մեծ ուժը և ըստ այսմ, պատշաճ տեղ է տվել դրանց սեփական խաղերում: Նրա խորին համոզմամբ առած-ասացվածքների գլխավոր արժանիքը դրանց հիմքում ընկած կենսական ճշմարտությունն է՝ իրականության երևույթները, առարկաները, մարդկային-հասարակական հարաբերությունները խելամիտ, ճշմարտացի ու գեղեցիկ արտացոլելը: Իր խաղերում վկայակոչելով հնօրյա խոսքաշեն վարպետների («փիր ուստաքար դագիրի») այլաբանական իմաստուն խոսքերը, Սայաթ-Նովան գրել է.

Ղուրք ին ասի փիր ուստաքար Գալիբըն.

Բաղ շինեցի, վաղթըն բաղից վատիրըն (33):

կամ՝

... Ակոբըն վուր կա բերանում,

Ձուր շին ասի ջանի չաղաց (185):

Նույն կերպ նորաճաշակ հայազգի մեծ գուսանը հաճախակի վեր է հանել նաև ժողովրդական առած-ասացվածքների գեղարվեստական արժանիքները.

Ով կու հասնե անց կացած էն մինձ մարթկանց,

Միր պալիրի խոսկըն լավ է լալընց կանց (150):

կամ՝

Վարպետներու հայտնի խոսկը

Հըրաման է՝ փիրի գրած,

Մե մեկ քաշած հադիդադից,

Օսկե բիլի նըման շաբած (185):

Ակնբախ է առած-ասացվածքների նշանակությունը Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ: Ժողովրդական կենդանի խոսքի օգտագործմամբ Սայաթ-Նովան առավել կենդանի ու խոսուն է դարձրել բարոյական, սոցիալական ու գեղագիտական իր ըմբռնումները, կատարել է հասարակական, կենսափիլիսոփայական ուշագրավ ընդհանրացումներ: Առած-ասացվածքների օգնությամբ նա ճշմարտասիրության, ազնվության, արդարության, քաջության, շիտակության, հյուրասիրության կոչ է արել մարդկանց, մերժել, նշավակել է կեղծիքն ու սուտը, անագնիվը, անարդարը, հսամոլությունն ու անարիությունը: Տարբեր առիթներով նա ազդարարել է.

Դրբուստ համփա ընգնողըն դամ շի քաշի.
Մեկը դարբաբ, մեկելըն խամ կու մաշի (188):

Լուու ծառից դարչինի հուտ-համ շի գա,
Կրակ էլ տաս՝ ճրջմաբիսին ման շը կա (174):

Եկ, լավ պահե—ամթ-ադաբն արի հիդ,
Սղ ու հացտ կիսի միշտ արլաբի հիդ (194):

Մարթա թե վուր հալալ բլի,
Կալից կաննե միշտ օրանաց (185):

Իգիյ մարքը խոսկըն էրեսին կոսե.
Էշխի ծովըն մտնողը խուր կու սուզվի (209):

Իգիբն էն է, ում աղ-հացը շի հատնի,
Ով ծառս կուլի, կապանքնի կու կըտըրտի (177):

Սայաթ-Նովայի հիշյալ բանաձևումների մեջ վարպետորեն ներծուլված են՝ «Դրբուստ համփա ընգնողը դամ շի քաշի», «Ճըջմարիտին կրակ էլ որ տաս մաճ չկա», «Սղ ու հացը արդարի հետ կը կիսեն», «Հալալ մարդը միշտ իր օրահացը կգտնի», «Իգիթը խոսքը երեսին կասի», «Իգիթի աղ ու հացը շի հատնի» ժողովրդական բանավեպերից սերող հայկական և ընդհանուր արևելյան հայտնի առած-ասացվածքները: Նիտակ ու աղնիվ, ազատաբաղձ ու երազուն «ռամիկ» բանաստեղծը, բնական է, որ ոչ մի կերպ չպիտի կարողանար լեզու գտնել իր ազնվազարմ տերերի հետ, հաշտվել, համակերպվել նրանց հայացքներին ու ճաշակին: Եվ նա, արհամարհելով ականակալիք ամեն տեսակի անախորժություն ու վտանգ, իր պատկերացրած «իգիթի» պես «ծառս» է եղել տիրող մոռյալ իրականության մեջ մարդուն կաշկանդող հասարակական-բարոյական կանոններ՝ դեմ, մերկացրել է՝ ամեն տիպի ձրիակեր-պորտաբույծների հոգու սնանկությունն ու ապականությունը, նշավակել նրանց միջավայրում բուն դրած կեղծիքը, ստորությունը, ամբարտալանությունն ու անբանությունը:

Ժողովրդական առած-ասացվածքների օգնությամբ Սայաթ-Նովան հատկապես բացահայտել է իր շրջապատում գոյություն ունեցող անհավասարությունն ու անարդարությունը, տառակուսել տիրող (իմա՝ առտոժո) արարքների նկատմամբ գրելով.

Ի՞նչ իմանաս, ով կու դատե, ով կոսե,
Տիրոջ բանեն գուխ հանիլ կուլի՞ վուր (200):

Մեկին՝ մըսխալ, էն մեկելին՝ հինգ քաբման,
Վուրն ախկատ, վուրն օսկով մե գանգին (184):

Սայաթ-Նովայի խաղերից բերված սույն տողերի մեջ բնականորեն ներհյուսված են՝ «Մեկը կդատի, մյուսը կուտի», «Որն ախքատ է, որը հարուստ», «Մեկին մըսխալ, էն մեկելին՝ հինգ քաբման» հանրահայտ ժողովրդական ասացվածքները: Իր խաղերի մեջ առած-ասացվածքների միջոցով Սայաթ-Նովան դրվատել է արդար աշխատանքը, աղնիվ աշխատավորին, իսկական ընկերությունն ու բարեկամությունը: Անդրադառնալով վերոհիշյալ հարցերին, իմաստուն երգիչ-բանաստեղծը միանգամայն տեղին օգտագործել է այդ առթիվ ժողովրդի մեջ տարածում ունեցող՝ «Աղոթքանին ուզ նայողը՝ անոթի կը մնա» և «Ողորմի կարմունջ կապող վարպետին» հայտնի պատկերավոր խոս-

քերքը՝ Նրա խորին համոզմամբ երանության, երախտագիտության արժանին ոչ թե հարստություն, ոսկի ունեցող ծուլ, անաղնիվ պորտաբույծներն են, այլ՝ աշխատասեր ու ջանադիր «կամուրջ կապող վարպետները», որոնց հանրագուստ աշխատանքը հար հիշելու են ներկա ու գալոց սերունդները:

Աղոթեմքն ով ուշ նայե,
Ձի ազատվի ախ ու վայեմ.
Սայաթ-Նովան ինքը հայ է,
Իր հավատին ամուր կանգնած (85):

Օղորմի էն կարմունջ շի՞տղ վարպիտին՝
Անց կենողը քար կու դնե, կու հիշե.
Խալխի համա կինը մաշեցի, ջան տվի՝
Տապանիս քարն էլ ախպերես կու քաշի (177):

«Ընկերը բնկերին թե չը գտնի, աշխարհը ախ ու վախով անց կը կենա», «Լավ բնկերը բնկերի համար դարդի դարման է» և նման ուրիշ իսկատիպ ժողովրդական ասացվածքների վկայակոչմամբ Սայաթ-Նովան հավստեղ է, որ ապահով և երջանիկ լինելու համար պետք է գտնվել հավատարիմ ընկերների ու բարեկամների շրջապատում, որոնք անկասկած համախոհ, դաշնակից ու զորավիգ կդառնան նրան ծանր պահերին: «Խալխի նոքարը» գտնում է, որ՝

Առանց ընգիր էս աշխարհում
Աշկրտ կուլի լիքը արուն... (185):

Լաց լիմ մենակ օրի համա.
Ման գամ սիրդաշ-յարի համա.
Լավ ընգիրն ընգիրի համա
Դարդի դարման—նար է էլած (185):

Սայաթ-Նովայի խորին համոզմամբ իր օգտագործած ռամկական իմաստուն ու պատկերավոր առած-ասացվածքները և դրանց զուգանմանությունը ու ոճով ստեղծված սեփական նույնպիսի խոսքերը ավելի բարձր են, քան միջնադարի համբավավոր «յոթ իմաստասերների» գրքային հայտնի ասույթները:

Կանց յոթըն իմաստասիրացըն շատ է
էս քու Սայաթ-Նովու բանքիրրն մե-մեկ (33):

Իբրև ժողովրդի ընդերքից ելած բնատուր հանճար, Սայաթ-Նովան լավ զգացել է ժողովրդական բառ ու բանով ներթափանցված իր խոսքի ուժը և իրավամբ հպարտացել է նրանով:

Դուն շասիս թե էս խիղճ սազանդարն ո՞վ ա.
Խոսկիս տերն իմ, հունարես էլ զբրով ա.
Արութիւնն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա.
Հենց բան կոսիմ, վուր ամբերում ձեն հանի (115):

3

Ժողովրդական բանարվեստի նշված միջոցների օգտագործումով չի սահմանափակվում Սայաթ-Նովայի անզուգական երգերի կապը այդ բանարվեստի հետ: Իր եռալեզու խաղերի մեջ, ճանաչված և սիրված զուսանք տարբեր առիթներով վկայակոչել է արևելյան ժողովուրդների վիպաշխարհի սիրային ու հերոսական բնույթի մի շարք նշանավոր ստեղծագործությունների հերոս-հե-

ընտանիքներին: Դա ինքնին վկայում է այն մասին, որ Սայաթ-Նովան լավ ծանոթ է եղել այդ ստեղծագործություններին, ըստ արժանվույն ընկալել, գնահատել է դրանք: Այդ բանին մեծապես նպաստել է համբավավոր գուսանի ծնընդավայր Թիֆլիս քաղաքը, որը Թումանյանի խոսքերով, «հին ժամանակներից եղել է Կովկասի լեռների անցքի առջև տարածված մի մեծ հանգույց, ուր եկել իսառնվել, միացել էին Արևելքի զանազան ժողովուրդներն իրենց բարբառներով, կրոններով, փիլիսոփայություններով ու ազգային ստեղծագործություններով»⁴: Երկար տարիներ ապրելով, աշխատելով ու ստեղծագործելով Թիֆլիսում, Սայաթ-Նովան լայն հնարավորություններ է ունեցել մոտիկից շփվելու նրա բազմազգ բնակչության բոլոր խավերին, լսելու, սովորելու նրանց ավանդություններն ու դրույցները, առասպելներն ու հեքիաթները, վեպերն ու վիպերգերը, որոնք իրենց բովանդակությամբ, հերոսներով, լեզվով ու արվեստով հարազատ են եղել մեծ գուսանին, համահնչուն նրա սեփական տաղերում արժարժված ու գեղարվեստական մարմնավորում գտած թեմաներին, հարցերին, հույզերին ու մտորումներին:

Մի բանաստեղծ, որը գունագեղ ու վառ պատկերներով երգել է բոլորանրվեր ու մաքուր սերը և միաժամանակ սրտի խորը ցավով արձանագրել անարձագանք, ձախորդ սիրո պատճառած հոգեկան ծանր տվայտանքները, ջատագովել է արդարությունն ու մարդկային ազնիվ սիրանքները, բնականաբար, չէր կարող անտարբեր գտնվել այդ գաղափարներով ու մոտիվներով շնչող սիրային և հերոսական բնույթի վերահիշյալ ստեղծագործությունների նկատմամբ: Սայաթ-Նովայի խաղերում առաջին հերթին ու ամենից շատ հիշատակվում ու վկայակոչվում են արևելյան վիպաշխարհի սիրված ու ընդհանուր ճանաչում գտած ստեղծագործություններից մեկի՝ հռչակավոր «Լեյլի-Մեջնուն» ավանդակալի ողբերգական ճակատագիրն ունեցող երկու հերոսները՝ գեղեցկուհի Լեյլին և սիրահար-բանաստեղծ Մեջնունը: Չնայած Լեյլին ու Մեջնունը փոխադարձ ու անկաշառ սիրով են կապված եղել իրար, բայց նրանք, բոլոր ավանդության, չեն հասել երջանկության, քանի որ աղքատ ծնողները չեն համաձայնվել Լեյլիին կնություն տալ Մեջնունին: Այս արևելյան ավանդակալն իր բովանդակությամբ ու ոգով շատ մոտ էր Սայաթ-Նովայի հոգուն՝ իբրև սիրո ու արդարության երգչի, իսկ նրա հերոսը՝ սիրահար-բանաստեղծ Մեջնունն էլ իր խառնվածքով ու դժբախտ ճակատագրով հեռից հեռու հիշեցնում էր հայ գուսանի անձնական կերպարն ու մոայլ ճակատագիրը: Այս հոգի վրա էլ ահա Սայաթ-Նովայի սքանչելի շատ երգերում բազմիցս հիշատակվում են գեղեցկության և նվիրվածության տիպար աննման Լեյլին և անձնուրաց ու կրակոտ սիրո նվիրյալ Մեջնունը:

Հայտնի է, որ իր սիրածի ֆիզիկական ու հոգեկան արժանիքները ընդգրծելու համար Սայաթ-Նովան տարբեր առիթներով հաճախակի վկայակոչել է վիպական Լեյլիին:

Յիս բու դիմեթըն չիմ գիրի՝
ջավահիր քարի նըման իս.
Տեսնողին Մեջլում կու շինիս՝
Լեյլու դիդարի նըման իս (23):

Նույն կերպ նա իր հոգեկան ծանր վիճակը համեմատել է Լեյլիի սիրուց հալ ու մաշ եղած և դիվահար դարձած Մեջնունի վիճակին:

⁴ Հ. Բ. Բ. Թ. ու մ. յ. ա. ն, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 257:

Մեջլումի պես լեյլու համար գովեցի,
Աշկս մնաց նազլու յարի տիս գալուն (153):

Մեջլումի պես սարն իմ նընդի, լեյլումեն խաբար շունիմ.
Իշխեմեդ սիրտըս էրվում է, հովանալու ճար շունիմ (34):

Աստված կու սիրես, դար մի հաբնի, զարեն էրված իմ,
Մեջլումի նման ման իմ գալի, յարեն էրված իմ (65):

Հայազգի գուսանն իրեն համեմատում է վիպական Մեջնունի հետ նաև այն բանի համար, որ ինքն էլ նրա պես բնությունից օժտված բանաստեղծ է, որի համար աշուղությունը հավասարազոր է անդամադրելի, մշտաբորբոք ու անմար իսկական կրակի:

Յիս շիմացա, վունց փաթաթվեց աշըղութինն իմ գլխին,
Ինձ դիվանա Մեջլում շինից, յիդ դըրից իմ կրակին (183):

Արևելյան վիպաշխարհի մյուս հանրաճանաչ հերոսը, որին մենք համախառն հանդիպում ենք Սայաթ-Նովայի երգերի մեջ, դա իրանական ազգային մեծ ավանդավելի գլխավոր գործող անձ Զալի որդի անպարտելի դյուցազն Ռուստամն է (Ռուստամե-Զալ), որի անունով և համախ կոչվում է ողջ ավանդավելը: Մի ստեղծագործություն, որի հիմքում ընկած գլխավոր դադափարը շարի պարտություն և բարու հաղթանակի գաղափարն է: Ռուստամը այդ գաղափարի կենդանի, խոսուն մարմնավորումն է: Նա անհուն անձնազորությամբ ու հերոսությամբ մարտնչում է հայրենի երկրի ազատության և հարազատ ժողովրդի երջանկության համար, արտահայտելով նրա լավագույն հույզերն ու երազանքները:

Ռուստամի անվան բազմակի հիշատակությունը Սայաթ-Նովայի խաղերում ցույց է տալիս, որ հայ գուսանը լավ ծանոթ է եղել նրա մասին եղած բանավոր ասքերին, հավանորեն նաև Ֆիրդուսու «Շահնամեին»: Եվ դա հասկանալի է: Հայտնի է, որ Սայաթ-Նովան իր կյանքի մեծ մասը ապրել է Վրաստանում, երկար տարիներ եղել է Հերակլ II թագավորի պալատական աշուղը: Հայտնի է նաև, որ վրաց ժողովրդի տարբեր խավերի մեջ և մասնավորապես պալատական շրջաններում սիրված ու լայնորեն տարածված են եղել պարսկական կենցաղն ու բարքերը, երգն ու ժողովրդական բանավեպերը, այդ թվում նաև Ռուստամի վերաբերյալ ասքերն ու զրույցները: Վրաց «Քարթլիս ցխովրեբա» կոչված հին տարեգրության մեջ եղած համապատասխան հիշատակությունները և հատկապես «Ռուստամիանի» խորագրով վրացական երգախառն արձակ պոեմի գոյություն փաստը (XVI—XVII դդ.), որը ոչ այլ ինչ է, բաց եթե Ռուստամի վերաբերյալ իրանական նշանավոր ավանդավելի վրացական ուրույն մի շարադրանքը, ասվածի պերճախոս ապացույցներից են: Սայաթ-Նովայի բանաստեղծական մտապատկերներում Իրանի փահլևաններ Զալն ու սրա որդի Ռուստամը հառնել են իբրև ժողովրդի հզոր ուժի, նրա լավատեսության և իր վերջնական հաղթանակի նկատմամբ ունեցած վառ հավատի յուրահատուկ խորհրդանիշներ, անպարտելիության, քաջության ու անձնագործության չափանիշներ, որոնց նա հակադրել է վերնախավի մարդկանց համար բնորոշ բացասական հատկանիշները:

Նոսրելով, օրինակ, «նոր խոջաների» մասին, հայ գուսանը, նկատի ունենալով նրանց կեղծավորությունն ու փոքրագությունը, զգուշացնում է իր ուն-

կընգիրներին՝ հեռու մնալ այդպիսիներից, քանի որ «Ամեն մի ձի նստող գեռ Ջալ չի դառնա» (199)։

Մի ուրիշ անգամ անդրադառնալով վախկոտ, անարի, մեծախոս ու հոխորտացող մարդկանց, Սայաթ-Նովան թունդ ծաղրի է ենթարկում դրանց ոչնչությունը.

Էնենց մարդ կա, փշխ՝ տիղում վեր կընգնե՝
 Դուռը մարթու ուժն ու հալը կու փտնե,
 Մարթ էլ կա, վուր չոլում թրչված հավի պես՝
 Իրենց տանը Թոստոմ-Ջալին կու փտնե (119)։

Բանաստեղծը հիշեցնում է իր ունկնդիրներին, որ չպետք է ընկրկել նենգ ու դավադիր թշնամիների ժամանակավոր հաջողություններից, որովհետև, ինչ էլ որ լինի, հաղթանակը ի վերջո պատկանելու է ազնիվներին ու քաջերին.

Քանի գուղե քընած տիղըն իր թշնամին կուռն կապե,
 էլի վիրումըն մեյդանըն Թոստոմի Ջալուն մընում է (69)։

Ռուստամ Ջալի վկայակոչումներին մենք ավելի շատ հանդիպում ենք Սայաթ-Նովայի սիրային խաղերում։ Եթե նախորդ դեպքերում իրանական ժողովուրդների վիպական հուշակավոր հերոսը համեմատության կամ հակադրության առարկա է դառնում գլխավորապես իբրև շիտակության, վեհանմունքի ու ազնվության տիպար-օրինակ, ապա այստեղ նա ներկայանում է հիմնականում իր անպարտելիությանը և անխորտակ զորավորությանը, օգնում մեր երգչին ավելի ցայտուն ու վառ վերարտադրելու սիրո գագաթան անդիմադրելի, ամենահաղթ ուժը.

Թե դուն էշխի հիդ մանգալըն հարցընիս՝
 Ձի դիմանա Թոստոմ Ջալըն՝ հարցընիս (30)։

Դուն փահլևաննիր իս ախտում,
 Վունց գովական Թոստոմ-Ջալըն (101)։

Արարմունքըտ արմանք բան է ինձ ամա.
 Թոստոմ-Ջալի թուրըտ մահ է ինձ ամա (99)։

Մարթ հիզըտ չի կանա խոսի,
 Թոստոմի Ջալ արմանալու (63)։

Էրենկ էլի քու սիրածին՝ սիրտ կունենա ասլանի պես՝
 Թոստոմ-Ջալն էլ չը պատահե էն թըրին, վուր նա կու հանե (116)։

Իրանական ժողովրդի նշանավոր հերոսը Սայաթ-Նովայի խաղերում հիշատակվում է նաև ուրիշ առիթներով ու կապակցություններով։ Երկար տարիներ հանդիսանալով վրացական արքունիքի պալատական գլխավոր աշուղը, Սայաթ-Նովան, իր բնատուր արտակարգ ձիրքի շնորհիվ սիրվել ու հովանավորվել է վրաց Հերակլ թագավորի կողմից, ինքն էլ, իր հերթին, հարգել ու մեծարել է նրան։ Սակայն արքայի ու հասարակ գուսանի այդ հարաբերությունը հարատև չի մնում։ Պալատական շրջաններին մոտ կանգնած ազնվականական դասի որոշ ներկայացուցիչների սարքած դավերի ու սադրանքների պատճառով, ինչպես հայտնի է, Հերակլը երես է դարձնում սիրած երգչից և հարկադրված է լինում հեռացնել նրան պալատից։ Այդ կապակցությամբ է ահա, որ Սայաթ-Նովան իր մի խաղի մեջ Հերակլին համեմատում է

հուշակավոր Ռուստամի հետ, և խնդրում է նրանից չլսել «յադի խոսքին» ու անմեղ տեղը իրեն չպատժել:

Դուն էն գրլխեն իմաստուն իս, խիլքս հիմարին բաբ մի անի,
էրադումըն տեսածի հիդ միլի մե հեսաբ մի անի,
Յիս խոմ էն գրլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի անի,
Թե վուր գիդլմ բեղարիլ իս, ուրիշին սաբաբ մի անի:

Վը կա քիզ պես հուրմի-հեքիմ՝ դուն Ռուստամի Զալ, թաքավուր,
Ասկըտ ասկերումըն գոված՝ համդ ունիս, գողալ թաքավուր.
Թե էսենց էլ սուշ ունենամ՝ գլուխս արա տալ, թաքավուր,
Մըտիկ արա քու Սանդոդին՝ նահաղ տիղ դադար մի անի... (20):

Սիրած յարի նկատմամբ իր մեջ բուն դրած բուն զգացմանն ու անդամաճան հավատարմությանը բանաստեղծական կերպավորում տված լինելու նպատակով, Սայաթ-Նովան վկայակոչում է արևելյան հանրահայտ «Աշուղ Ղարիբ» հեքիաթի հերոսի և հերոսուհու օրինակները, որոնցից մեկը (Աշուղ Ղարիբը), ինչպես հայտնի է, անհունորեն սիրված իր յարին արժանանալու համար չի ընկերվում ոչ մի խոշորագույն առջև և երկար ու համառ որոնումներից հետո, գտնում է նրան, իսկ մյուսը (Շահասանումը) հավատարիմ իր սիրածին տված խոստմանը, մերժում է այլոց առաջարկները, և երկար տարիների սըր-տատորուի ու անդամաճան սպասումներից հետո, ի վերջո, հասնում է իր «մուրազին»:

...Գուզիմ բերանս բաց անիմ, գովըրտ ասիմ թարիփի պես.
Տառ տարի է ման իմ գալիս Փաղիշահի շարիփի պես.
Օխտըն տարի էլ ման դու բամ սազըն ձիոխ Ղարիբի պես՝
Բութա Շահասանումըս գուն իս, էլ շունիմ օշով, աշքի լուս (46):

Իր պաշտելի «գողալին» Սայաթ-Նովան մի այլ անդամ էլ համեմատում է արևելյան մի շարք ժողովուրդների բանարվեստի մեջ մեծարելի հերոսի պատվանդանին բարձրացված Ալեքսանդր Մակեդոնացու (=Սկանդար Զուլ-դարի) անվան հետ կապված առասպելական «ջավահիր քարի» և «ջընաղ հեքալի» (=գեղաքանդակ անդրի) հետ:

...Դու հիշտ դիմիշ անելու չիս, ճըրաք վառած, դրժար ճարած,
Ուլոր էրեսըտ կու տեսնէ, խիլքն կու դառնա շըվարած,
Անգին յադուլթ, անգին ալմաս, բուրբըտ ջավահիր շարած,
Սկահար Զուլդարեն թողած, ջընաղ հեքալ արմանալու (60):

Սայաթ-Նովայի խաղերում տարբեր առիթներով հաճախակի վկայակոչված են նաև արևելյան վիպաշխարհի մի շարք ուրիշ հերոս-հերոսուհիներ՝ Ֆահրադն ու Շիրինը, Դիվանա Բահլուլը, Լոդման հեքիմը և այլն: Այդ արձագանքներն ու անդրադարձումները հայ գուսանի խաղերում հպանցիկ ու պատահական չեն: Դրանք ունեն ինչպես պատմահասարակական, այնպես էլ գեղադրական խոր արմատներ:

Շարուստ ու հին հայ գրականությունն ու անգիր բանարվեստը միշտ էլ մոտ աղերսի մեջ են եղել հարևան ազգերի գրականության և անգիր բանարվեստի հետ, դարերի ընթացքում, ավել կամ պակաս շափով, կրել են իրենց վրա վերջիններիս բարերար ազդեցությունը, իրենք էլ իրենց հերթին ազդել դրանց վրա: Սայաթ-Նովայի երգերում առկա արևելյան վիպաշխարհի հերոս-հերոսուհիների բազմաթիվ հիշատակություններն ու մեջբերումները նշանավորում են հիշյալ հասարակական ու մշակութային կապերի ընդհանուր

շղթայի կարևոր օղակներից մեկը: Դրանք վկայում են այն մասին, որ հայ-աղգի հռչակավոր գուսանը հրանալի ծանոթ է եղել արևելյան մի շարք ժողովուրդների սիրային ու հերոսական լավագույն վեպերին, վիպերգերին, զրույցներին ու ասքերին, որոնց հերոս-հերոսուհիները, բովանդակությունն ու արվեստը հարազատ են եղել նրա մտաշխարհին ու հոգուն: Նույն այդ հիշատակություններն ու մեջբերումները միաժամանակ հավաստում են մեծ գուսանի ստեղծագործական սեփականատիրի ու ընդգրկումների լայն շրջանակները, բացահայտում նրա աշխարհայացքի՝ ազգային ու աշխարհադրական սահմանափակումներից ազատ լինելը:

* * *

Սայաթ-Նովան իրավացիորեն համարվում է համաշխարհային քնարերգության այն առաջնակարգ ներկայացուցիչներից մեկը, որոնք դադարում են համարվել միայն մի առանձին ժողովրդի սեփականությունը՝ դառնալով բովանդակ մարդկության սիրելին: Նրա այդօրինակ լայն ճանաչումը, ստեղծագործության հզոր ուժի գնդարվեստական ու հասարակական ներգործման նշանակալից ազդեցությունը թե՛ իր ժամանակի և թե՛ հետագա շրջանի հայ և հարևան ժողովուրդների գուսանների ու բանաստեղծների երգերի վրա, այդ ստեղծագործության չխամրող հմայքն ու կենսոնակությունը մեր օրերում, պայմանավորված է ոչ միայն երգահան մեծ գուսանի բնատուր բացառիկ ձիրքով՝ մարդկային ամենաբարդ խոհերի ու ապրումների նրբերանգներն արտահայտելու դարմանալի վարպետությամբ, վառ երևակայությամբ, հուզաթաթալ խոսքով ու վարակիչ անմիջականությամբ, ներհուն ու կրակոտ խառնվածքով, այլև այն ինքնաբերական սերտ կապով, որ ունեցել է նա ժողովրդի ու նրա ավանդական բանավեստի հետ:

Անուրանալի փաստ է, որ ժողովրդական բանավեստը ղգալիորեն բարձրացրել է Սայաթ-Նովայի երգերի ինչպես հասարակական, այնպես էլ գեղարվեստական մակարդակը, մեծապես նպաստել է այդ երգերի տարածմանն ու ժողովրդականացմանը: Նույն այդ բանավեստը ավելի է ընդգծել, շեշտել սիրո ու արդարության համամարդկային գաղափարներով սոցորված նրա ստեղծագործության ազգային ոճն ու ոգին:

ОТРАЖЕНИЕ НАРОДНОЙ СЛОВЕСНОСТИ В ПЕСНЯХ САЯТ-НОВЫ

(Резюме)

Академик АН Армянской ССР А. Т. ГАНАЛАНЯН

Знаменитый армянский ашуг Саят-Нова по справедливости считается одним из тех первоклассных представителей мировой лирики, которые перестают принадлежать лишь одному народу. Всемирное признание Саят-Новы, значительное влияние его творчества на современные и последующие поколения поэтов-певцов как Армении, так и соседних народов, немеркнувшее обаяние и жизненность его поэтического наследства в наши дни—неслучайное явление. Оно обусловлено не только блестящим природным дарованием Саят-Новы, его удивительным мастерством выражать сокровенные думы и переживания, его ярким воображением, музыкальным талантом, но и органической связью его с истоками армянской и, шире, восточной народной словесности. Последняя, с ее вечно живыми и богатыми идеями человечности, любви и справедливости, с ее красочными изобразительными средствами, подняла на более высокую ступень как общественную, так и художественную ценность произведений певца. Народная словесность значительно повлияла на процесс становления и оформления подлинно национального стиля и колорита творчества Саят-Новы.